



ԻՐԱՎՈՒՆԿ



Rev. Pere G. Kalemkarian Mechitaristengasse
N 4 Vienne

ՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պուշկարիոյ համար տարեկան 12 փուլով
» » վեցամսեայ 6 »
Արտասահմանի » տարեկան 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Նամակ դրամ եռայլն դրկել հետեւեալ հասցեով
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐԱՌՈՒՆԵՔ ԼՐԱԳՐՈՑ ՎԱՌԱ (ՊՈՒԼԿԱՐԻՍ)
Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).

Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խնդրադրութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն դրկուիր եւ յարմար դասուած-
ները միայն կը հրատարակուին անձող-
ջովին կամ մասամբ:
Դասնոցման տողը՝ 20 սանթիմ. երե-
փեկ աւելի անգամներու համար 20 0/0
գեղջ կը լինի:

ՌՈՒՍԻԱ ԵՒ ՀԱՅԵՐԸ

2.

Յոսուալի չէ որ ասկէ ետքը հայ
ժողովուրդին մէջ հետեւողներ ու-
նենայ այն յեղափոխական վարդա-
պետութիւն թէ մենք մեր ցոյցե-
րով և շարժումներով կրնանք ստի-
պել Եւրոպան հզօրացնել միջամ-
տելու հայկական խնդրոյն և զայն
լուծելու մեզի բիշ շատ նպաստա-
ւոր կերպով: Պարզ անմտութիւն
մը պիտի ըլլար ասոր հաւատալ և
բացարձակ կուրուքիւն՝ չի տես-
նել որ Եւրոպա այսօր քաղաքա-
կան այնպիսի կացութեան մը մէջ
է որ մեր կողմէ նոր շարժումներ
կրնան պատճառ ըլլալ հայաստանի
մէջ հայութեան բնաջինջ կոտոր-
ուելուն՝ առանց ո և է եւրոպական
լուրջ միջամտութիւն հրաւիրելու
ինպատ մեզի:

Ուրեմն գոնէ մինչեւ այն ժա-
մանակ ուր արդի քաղաքականու-
թիւնը արմատական փոփոխութիւն
մը կրէ, պարտաւորուած ենք
Սօլդատներու և Մուրափէֆներ-
րու ուղեգիր ցոյց տալու յաւակ-
նութիւնը մէկգի թողելով, ընդ-
հակառակը մենք հետեւելու ա-
նոնց դիւանագիտութեան ոլոր
մոլոր ճամբաներուն և քաղաքա-
կան գէպքերուն, բարեպատեհ
վարկենին օգտուելու համար նը-
պաստաւոր կացութենէ մը:

Եւ ճիշդ այդ ժամուն համար
պէտք, անհրաժեշտ պէտք ունինք
Ռուսիոյ բարեացակամութեան,
որ ինչպէս արդէն ըսինք, միշտ,
ամեն պարագայի մէջ, վճռական
ազդեցութիւն պիտի ունենայ մեր
ճակատագրին վրայ: Երկու են.
Թագրութիւն միայն կայ որոնց
իրազործուելովը կրնայ, այն ալ
ոչ մօտաւոր ժամանակի մէջ, այս
կացութիւնը փոխուի: Նախ՝ Ա-
մերիկայի Մ. Նահանգներուն, իբր
եթններորդ մեծ տէրութիւն, Եւ-
րոպայի քաղաքական ասպարէզին
մէջ մտնելը, որուն հետեւանքնե-
րը անկարելի է այժմէն հաշուել.
ապա՝ գերմանական ազդեցութեան
փոքր Ասիոյ մէջ զօրանալը և գեր-
մանեւթրքական բարեկամութեան
այն աստիճան յառաջանալը, որ

կարենայ զօրաւոր արգելք մը ըլ-
լալ ռուսական ամեն ծրագիրներու
Ասիական թուրքիոյ մասին: Չեմ
կարծեր որ այս պատահականու-
թիւնը կարենայ բաղդաւորութիւն
մը նկատուիլ մեզի համար, որով-
հետեւ գերմանեւթուրք համա-
ձայնութենէն մեծագոյն թշնամու-
թիւն կրնանք սպասել քան Ռու-
սիայէն, քանի որ ալ չենք կրը-
նար թուրքին հետ բարեկամանալ
և գերմանական թեւարկութիւնը
ստանալու համար մեզի առաջին
պայման պիտի դրուէր թրքասէր
դառնալ:

է

Ի՞նչ միջոցներ կան Ռուսիոյ
բարեացակամութիւնը շահելու:
Այս յօդուածին սկիզբը յայտա-
բարեցինք թէ մենք ոչ նպատակ
և ոչ յաւակնութիւն ունենինք այդ
միջոցները ցոյց տալու: Մեր մի-
ակ նպատակն էր այս տողերով
խնդիրը, որուն կարեւորութիւն
չի տրուիր պէտք եղած չափով,
մէջտեղ նետել, անոր անագին նը-
շանակութիւնը ցոյց տալ մեր ըն-
թերցողներուն և ջերմագէտ յանձ-
նարարել զայն հայ ձեռնհաս շըր-
ջանակներու խորին ուսումնասի-
րութեան:

Ո՞ր են մեր դիւանագէտները.
ո՞ր են անոնք որ դիւրութիւն և
միջոցներ ունին չփոխելու, խոր-
հրդակցելու եւրոպական պետա-
կան անձերու հետ, բիշ կամ շատ
թափանցելու դիւանագիտական ծը-
րագիրներու և գաղափարներու:
Եթէ այդ հեղինակաւոր անձնա-
ւորութիւններ, որ ազգային գոր-
ծերէ հեռի կը մնան, յեղափոխու-
թենէ կը խրաչին, այս տեսակ
պարագաներու մէջ ալ չլանան օգ-
տակար ըլլալ ազգին, ալ ինչո՞ւ
պիտի կրեն հայ անունը: Թող
հաճին գոնէ իրենց անձին ու գիր-
քին ո և է զիտա տալու բնոյթ չու-
նեցող, զուտ դիւանագիտական
այս խնդրոյն մէջ բան մը ընել:
Եթէ անձամբ հրապարակ իջնելէ,
ուղղակի հայ ժողովուրդին խօսե-
լէ խորչելու պատճառներ ունին,
միջոցներ չեն պակսիր իրենց առանց
երեւնալու, անուղղակի միջոցնե-

րով հայ ժողովուրդին հաղորդե-
լու իրենց դիւանագիտական պա-
շարին, հետազոտութեան և իրե-
րու դրական, խղճամիտ ուսումնա-
սիրութեան արդիւնքը:

Ազգը կուզէ լուսաւորուիլ սա-
խնդրոյն մէջ թէ իսպառ, ցմիշտ
հրաժեշտ տալու է ռուսական հա-
մակրութիւնը շահելու յոյսին թէ
ոչ վերջին պարագային մէջ, կա՞ն
միջոցներ, զոհողութիւններ, ո-
րոնցմով կարենանք զայն ձեռք
ձգել, թէ՛ այդ բնաւ երբէք կա-
խում չունի մեր կամքէն ու աշ-
խատութենէն, այլ միմայն քաղա-
քական, արտաքին հանգամանք-
ներէ, որոնց գոյացումին ջանալ
բոլորովին դուրս է մեր կարողու-
թեան սահմանէն:

Շատ բան պահանջած կ'ըլլանք
մեր դիւանագէտներէն, խնդրոյն
ուսումնասիրութիւնը սպասելով ի-
րենցմէ:

ՎԵՐՁ

ՊԱՊԸ ԱԼԻԻ Յ Ո Յ Յ Ի Ն Ա Ռ Թ Ի Ի

Աթէնքի «Միութիւն» թերթին մէջ
ասկէ առաջ Պ. Թափառիկ յօդուած մը
հրատարակած էր որով Պապը Ալիի
ցոյցին պատասխանատուութիւնը կը
ժանրացնէր միակ անձի մը ուսերուն
վրայ: «Իրաւունք» ալ իր վերջին թի-
ւերէն մէկուն մէջ իր կողմէն կարգ մը
խորհրդածութիւններ կրնէր այս մասին:
Լրագրութիւնը շատ անգամ անգի-
տակից արձագանք կը դառնայ անձիշդ
հրատարակութիւններու, երբ իր աշ-
խատակիցները կամ իր տեղեկութեանց
աղբիւրները չեն համապատասխաներ
քննական հետազոտութեան արդի պա-
հանջներուն: Առ հասարակ ընթերցող
հասարակութիւնն ալ այնքան խստա-
պահանջ չի թուիր իր կարգադրածներուն
համար եւ այս կերպով շատ անգամ
կ'առաջնորդուի սխալ ճամբաներէ որոնք
իր ազգային զատարարականութեանը կը
փնտռեն, որովհետեւ պէտք է ընդու-
նինք որ մասնաւոր մեզի նման ազգի
մը համար ազգային զատարարակու-
թեան կարեւոր ազդակներէն մին ալ
Մամուլն է: Շատ քիչեր կը գտնուին
մեր ընթերցող հասարակութեան մէջ
որոնք բան մը կարողացած աստիճանին
իրենց ողջմտութիւնը եւ տրամա-
բանութիւնը գործածեն, քննական
ոգի ցոյց տան: Միւս կողմանէ եւ ոչ
իսկ այս տեսակ պահանջ մը իրաւունք

ունինք ընել մեր հասարակութենէն,
զի այն պարագային երբ այդ յատկու-
թիւնը տեսնուած ըլլար մեծամասնու-
թեան վրայ՝ արդէն աստիկա նշան մըն
էր թէ մենք իբրեւ ժողովուրդ մեծ
յառաջդիմութիւն մը ըրած ենք մտա-
ւոր զարգացման ճամբուն մէջ: Կը հե-
տեւի ուրեմն որ մեր գրողները վերին
աստիճանի խղճամիտ եւ անկաշխանդ
մտքի տէր մարդիկ ըլլալու են որպէսզի
մեր ժողովուրդը չի մոլորեցնեն առա-
ջին քայլէն եւ կամաց կամաց վարժե-
ցնեն զանի ուղիղ խորհելու եւ տրա-
մարանելու:

Մասնաւորելով խօսքերնիս Պ. Թա-
փառիկի յօդուածին, պէտք է ըսենք
որ Հնչակեան կուսակցութեան անց-
եալին ու ներկային մօտէն ծանօթ ե-
ղող ամէն հայ կրնայ մէկ անգամէն
տեսնել այդպիսի գրութեան մը անձ-
ղութիւնները եւ անուղիղ տրամաբա-
նութենէ մը բղխած տարօրինակ եզ-
րակացութիւնները: Բայց մեր ընթեր-
ցողներուն մեծագոյն մասը, յեղափոխա-
կան կուսակցութեանց գործերուն նը-
կատմամբ բոլորովին անտեղեկ կամ
թերի գաղափարներ միայն կազմած,
կարող են մոլորիլ Պ. Թափառիկի գը-
րութիւններէն. եւ որովհետեւ խնդիրը
իր հանրային նշանակութիւնը ունի,
օգտակար է որ պատմական ճշդութեամբ
եւ չը նախապաշարուած միտքով պար-
զենք այս տեղ ամէն ինչ որ կը վերա-
բերի Պապը Ալիի ցոյցին:

Հնչակեան կուսակցութեան կազմա-
կերպութեան կանոնագրին համաձայն
Կեդր. վարչութիւնը կը ծրագրէ եւ կը
պատրաստէ այն ամէն գործերը որոնք
հանրային նշանակութիւն և կարեւո-
րութիւն ունին: Մասնաճիւղը կրնան
առաջարկներ բերել, թեւադրութիւն-
ներ ընել Կեդրոնին՝ որ կա՞մ կ'ընդունի
զանոնք կա՞մ կը մերժէ: Արդի վերա-
կազմութեան թուականէն սկսելով
Մասնաճիւղերու իրաւասութեան շըր-
ջանակը բաւական լայնցած է, առանց
սակայն սահմարձակ իրաւունք տրուե-
լու իրենց որպէսզի առանց Կեդրոնի
գիտութեան եւ հաւանութեան կատա-
րեն գործեր որոնք հանրային շահեկա-
նութիւն ունին: Կը հետեւի ուրեմն
թէ, մինչեւ այսօր ալ Պոլսոյ Հնչակ-
եան Մասնաճիւղը չի կրնար այնտեղ
ցոյց կազմակերպել, եթէ Կեդր. Վար-
չութիւնը հակառակի:

Ասիկա խնդրին տեսական կողմն է:
Գտնք պատմական մասին: 1894 թուա-
կանէն մինչեւ 1895ի վերջերը, Պոլսոյ
Հնչակեան Վարչութիւնը կը բաղկա-
նար հինգ անդամներէ: Ասոնք ու-
նէին իրենց կանոնաւոր նիստերը եւ
ձայներու մեծամասնութեամբ կը սոս-
րիէին տեղական հանգամանք ունեցող

բոլոր գործերը. իսկ ընդհանրական նշանակութիւն ունեցող ամեն խնդրի համար կը դիմէին Կեդրոնի հրահանգին եւ գինուորական կարգապահութեամբ կը հպատակէին Կեդրոնէն բղխած պատուէրներուն: Այս սողերը գրողը այն ատենի վարչութեան անդամներէն է, հետեւաբար իբրեւ ակնաստեա վկայ կը պատմէ իրողութիւնները:


Պոլսոյ Վարչութիւնը յաճախ կը թեւադրուէր հանրային կարծիքէն. այն ատենուան հանրային կարծիքը բոլորովին տարբեր էր հիմակուանէն. ճշմարտութիւն մը զոր յեղափոխութեան քննադատները շատ անգամ կը մոռնան եւ զոր պատմութեան սիրոյն համար աղէկ կ'ըլլար որ յիշէին: Մեր թէոսական գործողութիւնները, սպառնական նամակները, մանր կամ մեծ ցոյցերը, ամենքն ալ իրենց ժամանակին չեւրմպէս ծափահարուած են ժողովուրդէն. ու երբ միեւնոյն ժողովուրդը այսօր կ'ելլէ հին գործերը կը քննադատէ՝ պարզապէս ինքզինքը քննադատած կ'ըլլայ անգիտակցաբար: Յեղափոխութեան վարիչները Պիզմարքներ, Սալպարիներ չէին, այլ ժողովուրդի հասարակ խաւերէն ելած ժողովուրդի զաւակներ: Սխալներ գործուեցան, տարակոյս չկայ, բայց այդ սխալները աղբովին գործուեցան, հետեւաբար այսօր ալ անոնց դարմանը ազգովին խորհելու ենք: Անխզճութիւն եւ սգիտութիւն է ամեն պատասխանատուութիւն անհատներու վրայ բարդել:

1895ի մայիսի բարենորոգմանց ծրագիրը մատուցուած էր Սուլթանին. ամիսներով պատասխան չէր տրուած. ժողովուրդը տենդոտ անհամբերութեամբ համակուած էր. ամէն կողմէ ձայն կը բարձրանար թէ յեղափոխականները պէտք է շարժին՝ խնդրոյն կենդանութիւն տալու համար: Ժողովուրդին աւելնը, եռանդը, հայրենասիրական գինովութիւնը ըմբռնելու համար կը բաւէ յիշատակել Համբարձման տօնին եւ Ազգ. Սահմանադրութեան տարեգրածի հանդէսները 1895ին: Ձեր ընթերցողներէն անոնք որ այդ տարին Պոլիս գտնուած եւ պատհուծութիւն ունեցած են յիշեալ հանդէսներուն ժամանակները՝ կրնան պահ մը իրենց աչքին առջեւ բերել այդ կրկին հանդէսներու պարզած տեսարանը: Տասնեակ հազարներով ժողովուրդ,

խուփ խուփ, լրտեսներու քթին տակ, յեղափոխական երգերով օղբ կը թընդացնէին եւ «կեցցէ՛ն» երգը տարափ մըն էր որ կը տեղար ի պատիւ այս կամ այն յեղափոխական կուսակցութեան: Այս տրամադրութիւններով բորբոքած ժողովուրդի մը հետ պիտի գործէին յեղափոխութեան համեստ վարիչները. վարիչներ, որոնք, պէտք է խոստովանել, քաղաքագիտական լրբնի խաղերու հմտութենէ աւելի՝ եռանդ եւ անձնուիրութիւն ունէին եւ իրենք ալ մատնուած էին հանրային հոսանքին, ինչպէս իրենցմէ շատ աւելի խելացիները, եկեղեցական կամ աշխարհական: Տեսած եմ Դրան հայ էֆէնդիներ, պահպանողական գլուխներ, որոնք ժողովրդային սրտաբուխ ցոյցերու հանդէպ չէին կրնար իրենց արցունքը դադել եւ յեղափոխական այս կամ այն գործը վաւոյններու, շոգենաւերու մէջ իրարու ականջէ հրճուանքով կը փոփոխային:

(Շարունակելի)

ՏԻՈՒՐ ԽՈՂԵՐ



Բարձր կան, յոռի եւ վատ, նման ներքին շարաւումներու, որոնք կը վերյայտնուին ձախող ժամանակի, աննպաստ հանգամանքի տակ:

Ախտավարակը, քանի կը վախելէ զուարթ երկինքի մը պայծառ արեւը, բարեխառն կլիմայի առողջ օդն ու ջուր, հովասուն մի բնակարան, գոյնն է վարդի, աչքերն՝ վառ, անդամներն գլուխութեք... Վերմաշափի յանկարծական փոփոխութիւն մը շատ է աւերելու գիմաց կեղծ շպարն, ալլալիւլու ինչ որ վաղանցուկ է եւ շինծու: Թանժամ դալկահար աչերուն խորը վաղուց գոյութիւն ունեցող ախտի մը որոշ նիշերը կը նշմարեն:

Միեւնոյն բանը կը համարձակիմ ըսել այն հիւանդ նկարագրին համար, որ երեւան եկաւ հայ գաղութականութեան մէկ մասին մէջ: Կը բաւէ ինչ որ գրուեցաւ հա-

յու անձնասիրութիւնն շոյող, փաղաքշող, Թանձնապաստան էակներ դարձեր են մեզմէ շատեր այժմ, գովեստ եւ դուռտաթ միայն լսելու եւ կարգալու տրամադիր:

«Հայն աշխատասէր է, շարքաշանոր համար գոյութիւն չունի ոչ արգելք եւ ոչ դժուարութիւն. նա ուր որ ալ լինի, իր եւ ազգին պատուոյն նահատակն է» կը սիրենք որ ըսուի եւ կրկնուի միշտ: Ու այս ըսելու ու լսելու ժամանակ կը մոռնանք այն դասակարգը որ մտքէն չանցնէր թէ ինք հայ է, որ չի մտածեր թէ ըրածները իր դիրքին եւ վիճակին անյարմար են, թէ ինք ո՛վ է, ո՛ւսկից եկաւ, ո՛ւր պիտի ելլէր, թէ որո՞նք կ'սպասեն իրեն՝ անօթի եւ անսուաղ:

90 թուականէն վերջ, երբ հանգամանքները փոխուեցան, պարզ երկինքի մը կենսատու արեւին տեղ՝ հով, մրբիկ եւ կարկուտ յաշորդաբար իջան Հայութեան գլխին, անոր անդամներուն մէկ մասը փոխանակ նորօրինակ քաջութիւն մը զգենլու, տոկալու համար այդ հարուածներուն, շուար մուր ինքզինքը կորոյս, խոյս տուող երկչոտ զինուորին պէս իր նետ. իրեններուն թիկունքին ուղղելով, մինչ մեր նախնիք «Պարթեւեան նետը», փախուստի ժամանակ իսկ իրենց թշնամույն կուրծքին կը շտկէին:

Եւ արդէն ամենուս համար ալ բարեւոյնեան դարձաւ այս ժամանակը ուր առանց զիրար հասկնալու, աւելի կաւերենք բան կը շինենք:

Գաղափարներու, զգացումներու սոսկալի խառնաշփոթութիւն մը է կերթայ, որուն քառօն մէջ զիրար գտնել, ճանչնալ ու հասկնալ անկարելի դարձեր է ալ մեզ:

Անհասկացողութիւնը կը ծնի հակառակութիւն ու սա՝ նախա-

տինք, հայհոյութիւն ու զրպարտութիւն: Ասոնց աղմուկին մէջ երկու բառ աւելի հնչուն կը դարնեն ականջի: Եթէ մէկը ինձ հակառակեցաւ, մատնիչ է կը գոչեմ, եթէ բարեկամիս հետ աւրուեցայ, վաւախ է կը սեմ ու կը գրեմ: Լըմընցաւ, գնաց:

Եթէ գաղթականութեան պատմութիւնը մանրամասն գրուէր, անոր մէկ մասը, թշուառութեան եւ շփոթութեան ծնունդ տգեղ բարքերու իմաստասիրական նկարագրութիւնը, ինչ սեւ էջեր պիտի գրաւէր:

Միեւնոյն դատապարտելի դէպքերը, հայուն կորովի բարոյականէն անսպասելի նկատուած, կը կրկնուին Եւրոպայի այս ու այն անկիւնը, հայութեան թշնամիներու աչքին առջեւ, օտար ազգերու ականջին մօտ:

Մասնաւորներու գործ համարելով զանոնք, կրնայինք ժամանակ մը կարեւորութիւն չտալ ու միութարուիլ: Սակայն չխաբենք մենք մեզի: Ինչ եպերելի դէպք եւ երեւոյթ որ պատահեցաւ Պուլկարիա, անոնց կրկնութեան արձագանգը եկաւ Եգիպտոսէն, Անգլիայէն, Ֆրանսայէն, այն բոլոր վայրերէն ուր հայ գնաց:

Ժամանակի խառնաշփոթ ձաղկին տակ յայտնուեցան բոլոր այն տխուր թերութիւններ, մոլութիւններ, զորս պէտք է նկատողութեան առնենք, ճանչնանք, որպէսզի կարող ըլլանք դարմանել:

Տասներկու ամիս է Մարսէլ եմ, տասներկուքէ աւելի գողութեան դէպքեր կրնամ յիշատակել. հայը հայէն գողցաւ. այսքան կը բաւէ. ամեն բան չի գրուիր: Գաղթականութիւնը իր ետին հետքեր թողուց, մաքրութեան կարօտ. ո՛վ պիտի ըլլայ մաքրող:

Հ.

Մարսէլ 22 Յուլիս.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Փ. Պոլիս 13 Յուլիս

Երեկ տեղոյս վարժարանին մէջ տեղի ունեցաւ թաղական խորհրդի ընտրութիւնը: Գուէի բացարձակ առաւելութեամբ խորհրդոյ անդամ ընտրուեցան Տիարք Յարութիւն Խոչեան, Պետրոս Պօստեցեան, Մարտիկ Գարակէօզեան, Գրիգոր Թաւրիսեան, Մ. Կարապետ Սէրեմեան, Միքայէլ Շիշմանեան եւ Ստեփան Զալկեան:

Այս ցանկին մէջ հին գլուխ շովբերու անուն չիկայ. ընտրուածներու անձնաւորութիւնները յոյս կուտան մեզի թէ պիտի յաջողին ազգ. գործերը քիչ շատ կանոնաւորութեան մէջ դնել:

Դպրոցական տարեշրջանը աւարտեցաւ լուրի միջիկ, առանց պարգեւաբաշխութեան հանդէսի վարժապետներու կողմէն վիճակացոյցերը առանձին բաշխուեցան աշակերտներուն. բարի վարքի ե ուս,

ՊԵՏՐՈՍ ՇԱՆՇԵԱՆՅԻ ԿԵՆՏԱԳՐԱԿԱՆՆ

(4)

Ան այսպէս Շանշեանց մեղմազգիկ խոհերու մասնուած՝ տխուր եւ վշտաբեկ, Թիֆլիս դարձած է. նա ա՛յլ եւս քաջուած է ազգային գործերէ. նա վնասող մարդ չէր, զի անընկճելի քերիստոնեայ էր, սակայն չէ ուզած ա՛յլ եւս բազմացնել իւր շուրջը գտնուող նախանձողաց եւ դաւադիրներու թիւն:

Շանշեանցի Ղարաբաղէն հեռանալով, երիտասարդութիւնն կորուսած է շատ բան. խաւարամիտներն լուսոյ եւ կրթութեան գործի դէմ դաւադրելով, ուղղակի ազգի կենսական շահերու դէմ գործած են: Ներսէսեան վարժարանի երեւմի Տեսուչն, Ղարաբաղի հայութեան սուրբ զգացումներն ներշնչող, զայն ոգեւորող գիտնականն, ի Թիֆլիս վէճիս գիւղն առանձնացած, հոն անցուցած է իւր կենաց մէկ մասն, որ անտարակոյս անհունա, անկշռելի կերպիւ օգտակար պիտի հանդիսանար ազգի եւ հայրենեաց, եթէ, նենգամիտ փոքրագրիներ չտալպէին զինքն մեկուսանալ եւ քաջուիլ ազգային գործերէ:

25-ի որ գրեթէ միեւնոյն բանն պատահած է եւ Մուրատեանց Սրբա-

զանի, որուն ազգովին կաթողիկոս ընտրուելէն վերջ, եկեղեցական եւ աշխարհական դաւադիրներ յաջողեցան ամենատխուր դերեր խաղալ եւ փորձեցին վնասեցնել եւ յուսահատեցնել զնա, թէպէտ նա վնասել չէ ուսած:

Շանշեանց 1889ին ի Թիֆլիզ կ'ըսած է իւր մահկանացուն, ապագայ սերունդին թողով յաւէտ անմոռանալի յիշատակ մը, պատկառելի անուն մը զոր պիտի կրկնենք միշտ ակնածանքով եւ խորին յարգանքով:

Դէռոգ վարդապետ Արամեան, Զալալեանցի մեղսակիցն, իւր խղճի խայթէն տանջուելով, տեսնուած է վարդաշէնի մօտ ընկուզենիէ մը կախուած, խեղդուած:

Լրացնելով Պետրոս Սամուէլեան Շանշեանցի կենսագրութեան մի համառօտ ուրուագիծն, կ'արտասուեմ թախծալիլ, այն բարոյական անկման վրայ, որոյ նշոյններն յաճախ կը տեսնուին ամենէն ազգասէր կարծուած անձնաւորութեանց վրայ:

Այս սողերը գրելու պահուն. կը կարգամ ազգային թերթի մը մէջ այն սոսկալի լուրը թէ՝ Սոսյ կաթողիկոսութիւնն կարգ մը անձանց քահանայութիւն համահայն, պէս պէս փոփոխութեանց պիտի ենթարկուի:

1885ի կաթողիկոսական ընտրութեան խնդրոյն առթիւ կատարուած դերերուն ակնաստես, այսօր Սոսյ կաթողիկոսութեան սպառնացող վրտանգին առջեւ՝ սրտիս խորէն բղխած արցունքը կը թափեմ եւ կը գոչեմ առ Աստուած «Ո՛վ Տէր գթած, Աստուած արդար, ինչո՞ւ կը թողուս որ նենգամիտներն, չարասիրտներն յաղթանակեն. ինչո՞ւ չես պատժեր վայրկեանապէս դաւադիրներն, ամբարտաւաններն. ինչո՞ւ կը թողուս որ անմեղներն հալածուին, նեղուին, վիշտ եւ ցաւ կրեն. եւ սակայն երբ երեւակայութեան առջեւ կուգայ Փրկիչն, Գողգոթայի ինչին վրայ տարածեալ, փչէ պսակն իւր գլխին, ապիրասներու ապտակներուն եւ նիզակներու հարուածին տակ՝ զոհ անմեղութեան, այլոց մեղքերն քաւելու համար, գրիչս կը կասի եւ տխուր խոկմանց մէջ արցունքներս կը սրբեմ:

Վահրամ Մամիկոնեան

ՎԵՐՋ

ման նիշերը շուրջընդհանրապես
ուսած էին այնտեղ :

Հոգաբարձութիւնը տեսնելով որ
եթէ յառաջիկայ տարի ալ պահէ
միեւնոյն վարժապետները , դպրո-
ցին երեսը նայող չի պիտի գրտ-
նուի և ուզելով գոհացում տալ
ժողովուրդին որ նոր վարժապետ-
ներու ձեռքով դպրոցներու բարե-
նորոգումը կը պահանջէ , գրաւու-
րապէս ազդարարեց վարժապետ-
ներուն և վարժուհիներուն թէ ի-
րենց պէտք չի պիտի ունենայ յա-
ռաջիկայ տարեշրջանին համար ,
դպրոցական պիտո՞նէին անձկու-
թեան պատճառաւ ,

...

Փ. Պօլսոյ հրաժարեալ ուսու-
ցիչներու մասին իրարու հակասող
գրութիւններ ստացած ենք . ու-
մանք ուսուցիչներուն պաշտօնա-
վարութեան արդիւնաւոր եղածը
լալը կը հաստատեն , իսկ ոմանք
ասոր հակառակ կը պնդեն և կը
հերքեն հոգաբարձութեան այն
նամակը , որ վերջերս հրատարա-
կուեցաւ իրաւունքի մէջ և գոհու-
նակութիւն կը յայտնէր ուսուցիչ-
ներուն աշխատութենէն : Քանի որ
նոյն ուսուցիչները յառաջիկայ տա-
րին պաշտօնի չպիտի կոչուին ,
ուղղակի դրական օգուտ մը չըս-
պասուիր ապագային համար ա-
սանկ վիճաբանութենէ մը , որ
կրնայ երկարել ու լրագրական
շատ սխալներ լեցնել ի դուր և
որուն տեղի տուած չըլլալու հա-
մար լաւագոյն կը տեսնենք մեզի
զրկուած նամակներուն ոչ մէկը
հրատարակելի Մեր կարծիքով աւե-
լի օգտակար է որ նոր , արժանաւոր
վարժապետներու ընտրութեամբ
և դպրոցական հարկաւոր բարե-
փոխութեանց խնդրով զբաղին մեր
Փ. Պօլսոյ ազգակիցներ , քան անց-
եալին վերաբերող վէճերով :

ԼՐԱՔԱՂ

Կ. Պօլսոյ ազգ. հիւանդանոցին
վերջին գալթակղական դէպքերու
քննութեամբ հաստատուած է որ
անհիմն է ինչ որ կը պատմուէր
կանանց յարկերուն նկատմամբ ,
ուր բնաւ այդ կարգի դէպք մը
պատահած չէ . անբարոյական բոյ-
նը եղած է արհեստանոցը միայն :

—Հայ եկեղեցւոյ գիրկը ընդու-
նուի փափաքող ուսմանահպատակ
հրէայ աղջիկը անչափահաս ըլլա-
լով , ըստ օրինի , պէտք է իր ծը-
նողաց յանձնուի , սակայն աղջիկը
կը յամառի , չուզեր իր տունը եր-
թալ և Ս. Պատրիարքը կը զգու-
շանայ բռնութիւն գործ դնելէ :

—Մեր Սօփիայի ազգակիցներ
Սահմանադրութեան տրամադրու-
թեանց համաձայն թաղ. խորհուրդ-
մը ընտրելով , տեղեկագրեր են
Պատրիարքարանի , խորհուրդին վա-
ւերացումը խնդրելով :

—«Գինիէն դարձած քացալը
բարկ կըլլայ» առածը կը յիշեցնէ

կարինի հայ բողոքականներու ազ-
գապետ Աղաճանեան որ կը դի-
մագրէ Մ. Չէմպլըսի պատասպա-
րած որբերը իրենց ազգ. եկեղե-
ցին զրկելու և հայու մը ձեռքով
անոնց կրօնական կրթութիւն տա-
լու առաջարկին , մինչդեռ ինք , ա-
մերիկացի միսիօնարը , իր հաւա-
նութիւնը կուտայ :

—Կրօն. ժողովը նկատողութեան
առնելով Շուսիի Տ խորհն քա-
հանային գէմ Ս. Պատրիարքին
ներկայացուած գանգատագիր մը ,
որոշեր է բացատրութիւն պահան-
ջել նոյն քաղաքին թաղ. խորհուր-
դէն և Տ. խորհնէ :

—Գաւթամունցի հայ երիտա-
սարգներ տեղւոյն յոյն աղջիկներուն
համար զօրեղ հակում զգալով , տը-
րամագիր են անոնցմէ կին ընտ-
րել սա պայմաններով . հայ փե-
սան հայ պիտի մնայ և յոյն աղ-
ջիկը՝ յոյն . պսակը հայկական պի-
տի ըլլայ և զաւակները հայ պի-
տի մեծնան . կըսուի թէ կրօնա-
կան ժողովը պիտի մերժէ արտօ-
նել այս տեսակ խառն ամուսնու-
թիւններ , խորհելով որ հայ երի-
տասարդները նուազ յարած են ի-
րենց եկեղեցիին քան յոյն աղջիկ-
ները իրենցինին . ասոնք հետեւա-
պէս միշտ ճար մը պիտի գտնեն
զաւակները յոյն մեծցնելու , ինչ
պայմաններ ալ կանխաւ դրուած
ըլլան : Ազգայնութիւնը մը իրա-
ւամբ դիտել կուտայ թէ եթէ
Գաւթամունցի մէջ հայ աղջիկնե-
րու նուագութիւն կայ , ուրիշ տե-
ղեր անոնց թիւը երիտասարդնե-
րու հետ բաղդատմամբ այնքան
շատ է որ ներկի չէ մեր երիտա-
սարգներուն զանոնք թողուլ և օ-
տարուհիներու հետ ամուսնանալ :

—Բաղէշի հայերուն մէջ ապօ-
րէն կենակցութիւնները տակաւ
կը շատնան : Ամուրիներ հոմանու-
հիներու հետ ժամանակ կանցընեն ,
իրենց կիներուն հետ գտնուած
այրեր ալ ուրիշ կիներու հետ :
Մինչեւ իսկ կիներ ալ որոնց այ-
րերը շատ ժամանակէ ի վեր բա-
ցակայ են , մէյմէկ մարդ կը գըտ-
նեն :

Այս էր պակաս , ընտանեկան
անբարոյականութիւն հայերուն
մէջ :

—Ոճրագործ եպիսկոպոս և ախ-
տավարակ միսիօնար Ֆէռքէնի եր-
բեմն պատասպարած որբերուն մէջ
որոնք հիմա ի վերջի ազգ. հաս-
տատութեանց կամ բարեսէր
ազգայնիներու տուններուն մէջ տե-
ղաւորուած են , մանչ մը պակաս
է , որուն համար փախստական
Ֆէռքէն ըսած էր թէ երուսաղէմ
զրկած է , բայց տղան հոն ալ չի-
կայ , անյայտ է . նոր ոճիր մը կը
գուշակուի այս գործին մէջ :

—Արդէն ծանուցինք թէ Գա-
րակէօզեան կտակին մասին բա-
նակցութիւնները խզուած են Պատ-
րիարքարանին և այդ ընտանիքին
ներկայացուցչին միջեւ : Այժմ կի-
մացուի թէ Գրիգոր էֆէնտի իր

աներեսութեանց իբր պսակ պա-
հանջած է նաեւ որ իր շինելիք
կալուածներուն միջոցով ինք
ըլլայ և իրմէ ետքն ալ իրմէ նշա-
նակութիւն ուրիշ փարակէօզեան
մը : Ուրիշ խօսքով կուզէ որ ինք
իր բացարձակ կամքին համեմատ
չինէ , քակէ , վարձէ , առնէ , ծա-
խէ կալուածները առանց մէկուն
իրապէս պատասխանատու ըլլալու :

—Չէյթուն զրկուած չորս թիւ
նօթներու սայլերուն , զորս գոմէշ-
ներ չեն կրցեր զառիվերը բարձ-
րացնել , տեղացի հայեր լծուել ու
սայլերը քաշեր են երեք ժամ տեղ ,
մինչեւ զօրանոց : Ասոր համար հոն
գիմաւորներ են բարեւի կեցած
զինուորներէն , կարապետ եպիս-
կոպոսէն , քահանայէն և երգեցիկ
մանուկներէ : Բոլոր ներկաները
բարեմաղթութիւն ըրեր են Սուլ-
թանին երկարակեցութեան հա-
մար :

Ճշմարիտ պատկեր թուրքիոյ
կեանքէն :

—Տարագրելոց յանձնաժողովին ուղ-
ղամիտ պաշտօնավարութեան մասին
կասկածի տեղի տուող գանգատներ
հասած ըլլալով Ս. Պատրիարքին ,
նաեւ ժողովին առաջարկով յանձ-
նաժողովը պիտի հրատարակէ իր հա-
շիւները եւ իր գործառնութեանց ըն-
դարձակ տեղեկագիրը :

—Ազգ. Հիւանդանոցի նոր հոգա-
բարձութիւնը կազմուած է , որուն կան-
դամակցին Տ. Պատրիկ Կիւլպէնկեան
եւ Տ. Գրիգոր Կիւլպէնկեան : Իսկ
Հիւանդանոցի Տիկիններուն Ուսմա-
կալութիւնը հրաժարել է , առարկելով
որ դրամական միջոցներու պակասու-
թեան պատճառաւ անկարելի եղած է
իրեն պաշտօնավարել օգտակարապէս :

—Քաղական ժողովը վաւերացուցած
է Ուսում. խորհրդոյ մէկ նոր ծրագիրը ,
որ նպատակ ունի Կեդրոնական վար-
ժարանի ուսումնական վրայ աւելցնել
այն դասերը որոնք անհրաժեշտ են ու-
սուցչական ասպարէզին պատրաստուիլ
փափաքող աշակերտներուն :

—Ս. Պատրիարքը Երզնկայի , Վանի ,
Քէմախի , Քլէի , Բաղէշի եւ Եդեսիոյ
կարօտելոց համար 500 ոսկի նպաստ
ղկեր է : Գաւառական վարչութեանց
յանձնարարելով զայն բաշխել խղճամիտ
արդարասիրտութեամբ :

—Տարէնտէի Ազգ. վարժարանին
ամսական 3 ոսկի նպաստ յատկացուել
է Պատրիարքարանէն :

—Իզմիրեան կտակին Գործ. Գանձ-
նաժողովը կը ծանուցանէ թէ այն 'ե-
ղինակները որոնք կը փափաքին ստա-
նալ Սահակ-Մեսրոպեան գրական մը-
ցանակը , պարտին իրենց աշխատասի-
րութիւնները զրկել Ս. Պատրիարքին
մինչեւ 1899 տարւոյ Յունվարի վերջը :
Տպագիր երկերը պէտք է երեք օրինակ
զրկուին , ձեռագիրները մէկ օրինակ :

—Տ. Ժամհարեան ամսական 30 ոսկի
նպաստ յատկացուցել է Մարաշի Ազգ.
Որբանոցին ուր կը խնամուին 60 բը-
նիկ Մարաշի որբեր :

—Դարակէօզեան Գրիգոր 5—6 տարի
առաջ երբ Ազգ. Պօլսոյ կը գտնուէր ,
5 ոսկի խոստացել է տալ Դարա Աղաճ
գիրկին Ազգ. վարժարանին շինու-
թեան ի նպաստ : Դպրոցը կը շին-
ուի , կը լինայ , սակայն անկարելի
է ըլլայ Դարակէօզեանէն 5 ոսկին փը-
ցնել , հակառակ իրեն հղած դիմում-
ներուն : Ու այս մարդէն կը սպասենք
որ իր եղբոր կտակած 60—80 հաղար

ոսկին հանէ , յօժարութեամբ տա՛յ ազ-
գին :

—Ստեփան փառա Ասլանեան եւ Գաբ-
րիէլ էֆ. Նորատուկեան յառաջ կը տա-
նին եղբր Ազգ. Սահմանադրութեան
վերաքննութեան աշխատութիւնները :

—Կարգաւոյժ Կէօքեան Կիրակոս ,
երբեմն վարդապետ , պահանջեր է որ
վերաքննուին իրեն դէմ եղած ամբաս-
տանութիւնները , սակայն Կրօն. Ժո-
ղովը ամբաստանութիւնները արգէն
հաստատուած նկատելով , որոշեց կար-
գազրկութեան կոնդակը զրկել բոլոր
եկեղեցիներուն :

—Քարբերդէն Բիշաքանդիօնի
զրկուած թղթակցութիւն մը կը
հերքէ Գոլէյքըր միսիօնար Մի-
լիըրտի գաւառացի բարեկեցիկ հայ
գաւազարգին մասին տուած ան-
նըպաստ տեղեկութիւնները : Մի-
սիօնարը , ինչպէս կը յիշէ ընթեր-
ցողը , Հայաստանի բանի մը գա-
ւառները պտտելէ ետքը Կ. Պօլսոյ
եկած ու յայտարարած էր թէ գա-
ւառացի հարուստները բնաւ հոգ
չեն ընել օգնելու իրենց կարօտ
ազգակիցներուն :

ԱՍՐԸ ԱԹԻԳ ՎԷ ԱՍՐԸ ՃԷՏԻՏ

(Էվիկիի նիւսիսիդիսիսի skվամ)

Ասրը հազըրտա մուհարէպէլէր
բէք սէյրէք վուգու պուլմագտա
իսէտէ , հէր սաաթ իչիւն զուհու-
րա կէլմէսի մէլհուղ օլան մուհա-
րէպէյէ հազըր պուլմագ մագ-
սէտի իլէ հէր տէվլէթ քէնտի մէ-
մալիքինի պիր օրտուկեհահա թահ-
վիլ իթմիշ օլուպ , երկպիւնլէրճէ
կէնճլէրի սէնլէրճէ սիլահ ալթըն-
տա թուլմագտա , վէ պու հազըր-
լըզլար իչիւն էհալինին գան թէր
իլէ գազանտըղը միլեօնլարճա ալ-
թուլարը սարֆ իթմէքտէ վէնի-
հայէթ պիւթիւն ճիհանը պիր-
հանը մալիյէյէ ուղարթմագլէ պէ-
րապէր «սուլհը ումուլիի մուհա-
ֆազա իտէյօրըզ վէ վաթանըն նա-
մուսընը վիգայէ էյլէյօրըզ» եօլը
տէսիսէլէրլէ էհալիյի գանտըրմագ
իսթէյէն շիմտիքի հիւքիւմէթլէրլէ
էսքի վէ մէտէնիյէթսիզ ասըրլար-
տաքի գապիլէ լէյիպէրի պէյնին-
տէ նէ՝ ֆարգ կէօրիւլէպիլիւր : Յը-
րանսայը դալէպէ իտէն Ալմանիա
էհալիսի պու կիւն էվլէլէրիտէն
զիյատէ սէֆիլ վէ ֆագիւր տէյիլ
մի տիր : Եւ շուսըրա կէօյա վա-
թանըն նամուսընը վիգայէ իտէն
Սպանեօլլարա նէ՝ տէմէլի . սէֆիլ
միլլէթ , Էհալինին չալըմասը վէ
դայլէթի սպէսինտէ կէչինէն պիր
թագըմ շուլիմիսիյի մաղրուր-
լըզընա ալթթ օլմուշ կէնճ Սպան-
եօլլար քէնտի քէնտիլէրինի թօթ-
լարըն աղընա աթմագտա , էօլ-
մէքտէ վէ գըրըլմագտա . ֆագաթ
նի՝հայէթի . նիհայէթի թէքրար
էհալինին սէֆալէթի իլէ նէթիճէ
պուլաճաղընա ասլա շիւքհէ եօգ
տըր :

Ասրը հազըր էսքի ասըրլարտան
տահա զիյատէ էհալինին սէֆալէ-
թիլն արթըրմըշ տըր : Պիզիւ ա-
թալարըլըզ եալընըզ թապի օլ-

տեղադրել հիւրըմտարարաւ խըտ-
մէթ իթմէկէ մահքիւմ իսիւնը .
Ֆազաթ չիմտի պիզ հիւրըմէթ-
լէրէ խատիմ օլմագտան մաստա
վասիթաի թէպալուչ օլան սէրվէ-
թէ վէ ֆապրիգաթօրլարա , եանի
սէրմայէյէ տախի պիր եէսիր կի-
պի խըտմէթ իթմէկէ մէճպուրըզ :
Նէթէքիմ՝ մուհարէպէտէն սաղ սէ-
լամէթ խանէսինէ ավտէթ իտէն
պիր ասքէր , կէլտիկի սաաթտա ,
եարընքի իէյէճէկինի թէտարիք
իչիւն սապահ էրքէնտէն ֆապրի-
գայա գօչուպ թիւֆէք եէրինէ
պիր մաքինանըն սաբընտան թուլ-
մայա մէճպուր տըր , վէ հէր կիւն
պու թարգտա , ֆազաթ սօնո՛ւ :
Սօնու եօգ , էօլլէքի հէրքէս միւտ-
տէթի էօմրիւնտէ եա թիւֆէնկէ
եա մագինայա , եա օրտույա եա-
ֆապրիգայա խըտմէթ իթմէկի վէ
պու մէշաղգաթա պէտէլ չօգ տէ-
ֆա գուրու պիր էքմէք :

Իշթէ էքսէրի էվրոբա միլլէթ-
լէրինին անվալը հաղըրէսի պու-
գայիտէ իւզրէ տիր . եանի էհա-
լինին 100տէ 90ը հիւրըմէթէ
խատիմ օլմագտան մաստա սէր-
մայէյէ (գարիթալիզմ) եէսիր տիր :
Ֆազաթ պուճուլէ պէրապէր ,
էհալինին 100տէ 10ը թէշըիլ իտէն
սէրմայէ սահիպի վէ հիւրըմէթ-
թին եիւքսէք մէմուրիյէթլէրին-
աէ պուլընան գըսմը պու ասրա
մէտէնիյէթ , մէսուտիյէթ վէ սէր-
պէթլիք ասրը թապիր իտէյօր-
լար :

Լաքին պիզ պու էֆքեհարա ա-
լա իշթիրաք իտէմէմէիլ , զիրա
վահի վէ պօշ իտտալար իչիւն սի-
լահ ալթընտա էօլմէք վէ էօլտիւր-
մէք մէտէնիյէթ օլմաղ , պիր գու-
րու էքմէք իչիւն գան թէր տէօ-
քէրէք եաշամագ մէսուտիյէթ տէ-
յիլ տիր . վէ պու շարթլար ալ-
թընտա «սէրպէստիյէթի շախսիյէ»
տէմէք քիւլլիյէն մանէսիլ օլտըզը
կիպի , էօլլիւմ սէրպէսթլիկինտէն
մաստա պաշգա սէրպէսթլիք կէօ-
րիւնմէյօր : Էվվէթ հէրքէս էօլմէկէ
սէպէսթ տիր : պու գատար :

Ֆէի . ԲՐԷՆՍԻՆ ԵՕԼՃԼԼԵՂԸ

Ձար հաղըթլէրի Ֆէիսամէթլու
Բրէնսէ Սէն Անտրի վէ Բրէնսէսէ
Սէն Գաքէրիւն Նիշանլարը իհտա
իթմիշ տիր :

Բէթէրօֆտան 12 Յուլիս թարիխի
պիր թէլէկրաֆ պէր վէճի աթի պիւ-
տիրմիշ տիր :

Պուլկարիա Բրէնսի վէ Բրէն-
սէսի Գօպուրկա միւթէվէճիհէն
Պէրլին թարիքի իլէ հարէքէթ
իթտիլէր , օրատա պիր գաշ կիւն
թէպտիլի գըյաֆէթ գալաճաղար ,
վէ պիլ ախէրէ Չէթինէյէ (Գարա-
Տաղլայթաթլը) կիտէճէքլէր :

Սթասիօնտա Կրանտիւքլէր վէ
Տիւշէպէր վէ խարիճիյէ Նաղըրը
վէ թիւրքիա էլլիսի հաղըր պու-
լընպ սամիմի սուրէթտէ վէտա-
լաշտըլար :

Պէրլին 14

Պուլկարիա Բրէնսի վէ Բրէն-
սէսի վէ Բրէնս Պօրիս հաղարաթը
տիւն աղշամ թէպտիլի գըյաֆէթ
պուրայա եէթիշտիլէր :

Մ Ո Ւ Հ Ա Ր Է Պ Է

Ամէրիգալըլար Սանթիակօյը վէ
Գիւպանըն պիր գըսմընը զապթ
իթտիլէրէն սօնրա , «եէտիքճէ իշ-
թահը աշըլըր» տարպը մասալ օլ-
տըզը կիպի , եէնիտէն ասքէրի
գուվվէթլէրինի արթըրմագտա օ-
լուպ , Բօրբօ Րիկօյը զապթ իտէ-
պիլմէք իչիւն 40000 ասքէր հա-
ղըրլամըլար տըր :

Տիկէր թարաֆտան ամէրիգա-
լըլարըն Գանարին վէ Ֆիլիբին ա-
տալարընա ճիհէթ ճիհէթ հարպ
սէֆինէլէրի եօլլամըլ , վէ պիր
չօգ Նօգթալարտան ասքէրլէր գա-
րայա չըղարմըլ օլտըզլարը վէ հէր
կիւն իչիւն պիր գաշ Նօգթա զապթ
էլլէմիշ պուլընտըզլարը թէլէկ-
րաֆլար պիլտիլմէքտէ տիրլէր :

Ասըլար Ամերիգալըլարա զիյա-
տէսի իլէ մուսվէնէթ իթմէքտէ
օլուպ , պու սայէտէ Ամերիգալը-
լար Հապանա եագընլարընտա Ֆի-
պարա Նամ մահէլէ գարայա չըգ-
մըլլար վէ եաղընէն Հապանալը
տախի զապթ իտէպիլէճէքլէրի մէ-
հուգ տըր :

Մ . Ամերիգանըն ճուհուրիյէթ
րէյիսի Մ . Մաք Բինլի՝ Մէճիսի
այան աղշալարընտան պիրսինէ
տէմիշ տիր «Հապանա իսթիլա ա-
լընմագտան էվվէ Սպանիօլլար
միւսալէհէ թէքլիֆինտէ պուլըն-
մաղլար» :

Գէմէնէրա վէ Կանթանամօ մու-
հաֆըլլարը Ամերիգալըլարա թէս-
լիմ օլընմըլլար :

Ամերիգա զըրհըլարը պիր թա-
րաֆտան տէ Սպանիա եօլընը էլէ
ալմըլ իքէն , Սպանիա տախիլին
տէ գարըլըզլըզ հիւքմ իթմէք-
տէ տիր , վէպու սէպէպտէն Գար-
լիստ Նամ Ֆըրգա րէյիսլէրի Սպա-
նիայը թէրք իտուպ , խարիճէ չըգ-
մայա մէճպուր օլըլլար տըր :

Ժէնէրալ Միլ Բօրթօ . Րիկօ եա-
ղընլարընտա Պիւանիայա ասքէր
չըգարմագ թէտպիրինտէ օլուպ ,
300 ասըլար պուլընարա մուսվէնէթ
իտէճէլէր իմիշ . քէզա մէզքիւր
իլիմանը չիմալի-չարգ վէ չիմալ
թարաֆլարընտան տախի մուհա-
սէրէ իթմէք իչիւն պիր չօգ Նօգ-
թալարտան ասքէր սէվգ օլընմըլ
տըր :

Ամերիգալըլար վէ ասըլար պէյ-
նինտէ իսթիլաֆ հուսուլա կէլմիշ
օլտըզընտ տայիր ալընան հապա-
տիսլէրի ամէրիգալըլար խալանա
չըգարիյօրլար :

ՄԻԻԹԷՆԵՎ ՎԻԷ

Թիւրքիանըն եէնիտէն լէվաղի-
մաթը հարպիյէ թէտարիքեաթըն-
տա պուլընտըզըն էվվէճէ եաղ-
մըլ ըտըզ :

Իքի միլիօն ֆիշէնք եարտըրմագ
իչիւն բաղարըզ պիլմիշ իսէ տէ ,
էլան մուգալէլէնամէլէր իմզալան-
մամըլ :

Քէզա 220,000 ատէտ Մալլէր
թիւֆէնկի , 108 ատէտ Գրուք
թօփլարը սաթըն ալմագ իչիւն
մուսապէրաթա պաշլանմըլ տըր :

— Կիրիտ իչիւն եօլլանըլան
թիւրք ասքէրլէրին ատայա չըգ-
մասընը ամիրալար մէնն իթմիշ
օլմալարընա գարըլ Պապը Ալի
բօթէսթ իթմիշ վէ Նօթասընտա
տէմիշ տիր քի՝ տէվլէթլէր տախի
կիրիտէ եէնի ասքէրլէր եօլլամըլ
իքէն քէնտիսի տէ օլ թէտպիրտէն
կէրի տուրամաղ :

Ֆազաթ Թանըն պէյանընա
կէօրէ՝ Թիւրքիանըն պու բօ-
թէսթի տէվլէթլէրին գարարընը
թէպտիլ իթմէկէ վէսիլէ օլմա-
յաճագ :

— Ինկիլիթէրա տէնիլ գուվվէ-
թինի տուհա զիյատէ արթըրմագ
իչիւն 175 միլիօն ֆրանգտան մա-
տա 200 միլիօն ֆրանգ տախի
իմզալամըլ օլտըզընտան , պաշլըճա
Ֆրանսըզլարըն ընհաթը պօզուլմըլ
կէօրիլիյօր : Զիրա Թան կաղէ-
թասը Յուլիս 25 թարիլի Նիւս-
լէսինին իլք սիւլմուլարընտա
պիր պէնտ եաղուպ , պաղը սաշմա
սարան մանէլէր վէրմիշ տիր :

— Ֆէիսամ . բրէնս Ֆէրտինանտ
հաղըթլէրի Բուճանիա Գըրալընը
զիյարէթ իտուպ , Քէօսթէնճէտէն
Պուլկարիայա ավտէթ իթմէսինտէ ,
մէղքիւր չէհրին պուլկար էհա-
լիսի թարաֆընտան պիր հէյէթ
Բրէնսին թէշըիֆինտէն տօլայը
մէսըրէթ ու թէպրիգաթընը թագ-
տիմ իչիւն հուզուրա չըգմըլ օլ-
մասընտան Նաշի , պաղը բուճէն
կաղէթալարը Քէօսթէնճէտէ միւ-
թէմէքլին պուլկարլարըն պու հա-
րէքէթի եօլըլը() կէօրմէքլէ՝ «Բու-
ճանիա թապասը օլուպտէ գա-
նուէն հէր պիր հագգա հայիլ
պուլընտըզլարը հալտէ , Պուլկար
միլլէթի Նամընա Քէօսթէնճէտէ
քէնտիլէրի Պուլկար կէօսթէրմէ-
մէլէրի իքի գօմշու տէվլէթլէր պէյ-
նինտէ սօվուզլուգ հուսուլա կէլ-
մէսինէ սէպէպիյէթ վէրէպիլէճէ-
կինտէն , Քէօսթէնճէ հիւրըմէթի
անլէրի մէնն իթմէկի իտի » տէ-
մէք տէ տիրլէր :

Մէղքիւր բուճէն կաղէթալարը-
նա սիւլալ իտէրիլքը , Թրանսիլ-
վանիլար Բուճէնլէրէ գարըլ Մաճար
հիւրըմէթի էօլլէ պիր թէտպիր-
տէ պուլընըր իսէ , քէնտիլէրի նէ՝
տէյէճէքլէր իտի :

ՍՕՆ ՀԱՎ ԱՏԻՍԱԹ

Բուճանիա Գրալը վէ վէլիահ-
տը Ձար հաղըթլէրինէ զիյարէթ
իթմէք իչիւն հարէքէթ իթմիշ օ-
լուպ , յուլիս 14 տէ Կրանիցայա
եէթիշմիշ վէ 15 տէ վարսօվատան
Բէթէրսպուրկա միւթէվէտճիհէն
հարէքէթ իթմիշլէր տիր :

Մատրիս 15 յուլիս

Պիր մուսթազամ Սպանիա տօ-
նանմասը Բօրթօ Րիկօ էօնիւնտէ
կէօրիլտիւ . Ամերիգալըլար գա-
րայա չըգմայա չաղըշտըլար իսէ-
տէ մէվաֆագ օլմաալըլար :

Ֆազաթ Մ . Սախասթանըն պէ-
յանընա կէօրէ Բօրթօ Րիկօ եա-
ղընընտա էյի մուհաֆաղա օլըն-
մայան պիր Նօգթատան գարայա
չըգմըլլար :

Վաշիկիլքօն 15 յուլիս

Ժէնէրալ Միլ օրտուլը իլէ հա-
րէքէթ իտուպ , ուֆագ պիր մու-
սատէմէտէն սօնրա Կիւանիգայա
(Բօրթօ Րիկօ) չըգտը , պու միւ-
սատէմէտէ 4 Սպանիօլ էօլմիշ :

Սպանիա հիւրըմէթի Ամերիգա-
նըն ճիւմհիւրիյէթ րէյիսի Մաք-
ֆինլիէ պա թէլէկրաֆ սուլհ ի-
չիւն Մ . Գամպօն վասիթասը իլէ
միւզէքէրէյէ կիրիշիլմէսինի թէք-
լիֆ իթտի :

Ֆրանսա էլլիսի , Մ . Գամպօն ,
Սպանիա թարաֆընտան Մաքֆին-
լիյէ մուրաճաթլէ սուլհ միւզէ-
քէրէսինէ կիրիշիլմէկէ արզու պէյան
իթտի իսէտէ շարթլարտան պահս
իթմէտի :

Մաք Բինլի ճէվապընը թէլիսիլ
իտէրէք , վիւքէլա մէճիսինէ միւ-
րաճաթտան սօնրա «միւսալէհա
միւղաքքէրէսինէ կիրիշիլմէկի մէպ-
տէն գապուլ իտէրիլ , ֆազաթ
Սպանիա սարահաթէն շարթլարը
պէյան իտէն տէկին մուհարէպէյէ
տէվամ իտէճէկիլ » տէյու Մ . Գամ-
պօնա ճէվապ վէրտի :

ԱԶԴ

Սիլիստրէի իգական Նախակըր-
թարանին համար կուզուի վկայ-
եալ ուսուցչուհի մը , որ պէտք է
տեղեկալ ըլլալ՝ Հայերէնի , Կրօնա-
գիտութեան , Թուրքաբանութեան ,
Աշխարհագրութեան և լաւ Զե-
ռագործի : Ամսական գոհացուցիչ
է : Փափաքողք կրնան դիմել ուղ-
ղակի նոյն քաղաքի հոգաբարձու-
թեան : 2—5

ԱԶԴ

Աղգային Կեդր . Վարչութեան
Ուսումնական Խորհուրդէն վկայ-
եալ փորձառու ուսուցիչ մը պատ-
րաստ է Պուլկարիոյ կամ արտա-
սահմանի աղգային վարժարաննե-
րէն մէկուն մէջ տեսուչ—դաստի-
արակի և կամ ուսուցչի պաշտօն
ստանձնել :

Ճիւղերն են Հայերէն և Ֆրան-
սերէն լեզուները , պատմութիւն ,
աշխարհագրութիւն . Ի հարկին կա-
ւանդէ Նաեւ բնական գիտութիւն-
ները մանկավարժական դիւրուսոյց
մէթոտներով :

Պայմաններուն համար բանակցիլ
ուղղակի խմբագրութեանս հետ :